

ՓՈԽՆՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՄԻՋԵՎ

Սույն Փոխըմբռնման Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) ընդունվել և ամրագրվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Միացյալ Նահանգների Խաղաղության կորպուսի (այսուհետ՝ Խաղաղության կորպուս), համատեղ հիշատակման դեպքում՝ Կոլմեր, հիմք ընդունելով 2018թ. օգոստոսի 8-ին Երևանում ստորագրված Փոխըմբռնման Հուշագիրը:

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. Երկու երկրների ժողովուրդները և կառավարությունները կարևորում են կրթության և երիտասարդության բնագավառներում վերապատրաստված կադրերի առկայությունը ԱՄՆ Խաղաղության կորպուսի Անգլերենը որպես օտար լեզու և Երիտասարդության զարգացման ծրագրերի միջոցով:

1.2. Հուշագիրը կազմվել է Խաղաղության կորպուսի անգլերեն լեզվի ուսուցման (այսուհետ՝ ԱԼՈՒ) որպես օտար լեզու դասավանդման և Երիտասարդության զարգացման ծրագրերի նպատակները սահմանելու, Կոլմերի պարտականություններն ու պատասխանատվությունները հստակեցնելու միջոցով՝ երկու ժողովուրդների և կառավարությունների միջև փոխըմբռնմանը նպաստելու և Հայաստանի կրթական համակարգերին և երիտասարդներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

1.3. ԱԼՈՒ ծրագիրը նախատեսում է դպրոցներում անգլերենի դասավանդման, լեզվի ակումբների և այլ արտադասարանական միջոցառումների միջոցով բարձրացնել Հայաստանում անգլերեն լեզվի իմացության մակարդակը: ԱԼՈՒ ծրագիրը անգլերեն լեզու դասավանդող հայ ուսուցիչներին մասնագիտական աջակցություն կցուցաբերի՝ համատեղ անգլերեն դասավանդելու, դասընթացները պլանավորելու, անգլերեն լեզվի ուսուցիչների վերապատրաստման և կրթական ռեսուրսներ մշակելու գործում:

1.4. Երիտասարդության զարգացման ծրագիրը նպատակ ունի երիտասարդների շրջանում բարելավել կյանքի հիմնարար հմտությունները և զբաղունակության հմտությունները ակումբների, ճամբարների և արտադպրոցական սպորտային, ժամանցային ուսուցողական ծրագրերի միջոցով: Ի հավելումն, երիտասարդության զարգացման ծրագիրը կաջակցի հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների, ֆորմալ և ոչ-ֆորմալ երիտասարդական խմբերի

հետ աշխատողների և երիտասարդ առաջնորդների ծրագրերի մշակման և կառավարման հմտությունների զարգացմանը:

II. ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1 **Հավաքագրում և ընտրություն.** ԱԼՈՒ և Երիտասարդության զարգացման ծրագրի կամավորների (այսուհետ՝ Կամավորներ) ընտրությունը կատարվում է Խաղաղության կորպուսի կողմից՝ հիմք ընդունելով Կամավորների լեզվական և մասնագիտական հմտությունները, ներկայացված երաշխավորագրերը՝ ներառյալ համապատասխանությունը տվյալ գործունեությանը, անհրաժեշտ փաստաթղթերը և բժշկական տեղեկանքները: Կամավորների հավաքագրումն ու ընտրությունը կատարվում է Խաղաղության կորպուսի կողմից:

2.2 **Վերապատրաստում.** Խաղաղության կորպուսը Կամավորներին տրամադրելու է իրենց պարտականությունների և պատասխանատվությունների աշխատանքային նկարագիրը: Խաղաղության կորպուսի անձնակազմը պարտավորվում է Կամավորներին տրամադրել որպես կամավոր իրենց հասանելիք դրամական օժանդակության (ներառյալ նպաստների, բուժօգնության և արձակուրդի) և պարտավորությունների (ներառյալ մասնագիտական վարքագծի, Հայաստանի Հանրապետության օրենքներին և Միացյալ Նահանգների Խաղաղության կորպուսի կանոնակարգերին և գործընթացներին հետևելու) ընդհանուր նկարագիրը, վարչական, բժշկական և անվտանգության, միջմշակութային, մասնագիտական վերապատրաստում, ինչպես նաև որպես կամավոր կատարողականի վերաբերյալ հիմնական ակնկալիքները:

III. ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

Անգլերեն լեզվի ուսուցման ծրագիր

3.1 Խաղաղության կորպուսը կնշանակի ԱԼՈՒ Կամավորներ ուսուցիչների վերապատրաստման կենտրոններում, դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում:

3.2 ԱԼՈՒ ծրագրի միջոցով Խաղաղության կորպուսը նպատակ ունի կատարելագործել անգլերեն լեզվի դասավանդողների հմտությունները, հնարավորություններ ընձեռել ուսամնառողներին ակադեմիական հաջողության հասնելու միջոցով, ինչպես նաև կյանքում հաջողության հասնելու հնարավորություններ ընձեռել երիտասարդներին և համայնքի ներկայացուցիչներին:

3.3 Հայ դասավանդողների հետ համատեղ աշխատանքի արդյունքում Կամավորները կարող են մշակել և ներկայացնել կրթական նյութեր գրադարանները և ռեսուրս կենտրոնները հարստացնելու նպատակով:

3.4 Կամավորների գործողությունների նպատակն է կատարելագործել համայնքի անդամների մասնագիտական հմտությունները: Այս նպատակին հասնելու համար ԱԼՈՒ ծրագրի անձնակազմը կաշխատի դպրոցների, արվեստի դպրոցների,

մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Ծրագրի նպատակներից է նաև արձագանքել համայնքի պահանջներին՝ համագործակցելով տեղի կազմակերպությունների հետ:

Երիտասարդության զարգացման ծրագիր

3.5 Խաղաղության կորպուսը երիտասարդության զարգացման ծրագրի Կամավորներ կնշանակի հասարակական կազմակերպություններում, երիտասարդական կենտրոններում, ինչպես նաև ավագ դպրոցներում՝ աշակերտական խորհուրդների հետ աշխատելու նպատակով:

3.6 Երիտասարդության զարգացման ծրագրի իրականացմամբ Խաղաղության կորպուսը նպատակ ունի երիտասարդությունից չափահասություն անցումային փուլում երիտասարդների մոտ բարելավել այնպիսի հմտություններ, որոնց շնորհիվ երիտասարդները կդառնան առավել իրավազորված չափահասներ, որոնք ակտիվ ներգրավվածություն կցուցաբերեն համայնքի կյանքում և որոշումների կայացման գործընթացներում:

3.7 Հայ գործընկերների հետ համատեղ, մասնակցային մոտեցումներ ու գործիքակազմ կիրառելով, Կամավորները կիրականացնեն ներքոնշյալ առաջադրանքներն ու միջոցառումները.

Երիտասարդների շրջանում կյանքի հիմնարար հմտությունների բարելավման նպատակով

- Պլանավորել և վարել կյանքի հիմնարար հմտությունները զարգացնող երիտասարդական ակումբներ:
- Պլանավորել և իրականացնել կյանքի հիմնարար հմտությունների զարգացման վերաբերյալ երիտասարդական ճամբարներ:
- Երիտասարդների հետ ստեղծել մենթորային փոխհարաբերություն՝ վերջիններիս մոտ կյանքի հիմնարար հմտությունները զարգացնելու նպատակով:
- Համատեղ պլանավորել և անցկացնել կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանը նպաստող սպորտային, ժամանցային և ուսուցողական վարժանքներ:

Համայնքերում երիտասարդների ակտիվ ներգրավվածություն խթանելու նպատակով

- Պլանավորել և իրականացնել երիտասարդների մասնակցությամբ իրազեկման տարաբնույթ միջոցառումներ (օրինակ՝ Կամավորության միջազգային օր, Երկիր մոլորակի օր, Երիտասարդության միջազգային օր, Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր, Կանանց միջազգային օր և այլն):
- Երիտասարդների մասնակցությամբ պլանավորել և կազմակերպել կամավորական նախագծեր՝ խթանելու կամավորության մշակույթի տարածումը համայնքներում:

Երիտասարդների շրջանում զբաղունակության հմտությունները զարգացնելու նպատակով

- Համատեղ պլանավորել և անցկացնել զբաղունակության հմտությունների զարգացման թեմաներով ակումբներ:
- Պլանավորել և անցկացնել զբաղունակության հմտությունների զարգացման վերաբերյալ երիտասարդական ճամբարներ:
- Երիտասարդների հետ ստեղծել մենթորային փոխհարաբերություն՝ վերջիններիս մոտ զբաղունակության հմտությունները զարգացնելու նպատակով:
- Ակումբների միջոցով երիտասարդներին փոխանցել աշխատաշուկայի համար կարևոր գործնական հմտություններ, ինչպես օրինակ թվային գործիքների կիրառում, խոսակցական անգլերենի բարելավում և այլն:

Երիտասարդների հետ աշխատողների ծրագրերի նախագծման եվ արդյունավետ հրականացման կարողությունները բարելավելու նպատակով

- Համատեղ մշակել և իրականացնել երիտասարդական ծրագրեր:
- Անցկացնել ծրագրերի նախագծման և իրականացման կարողունակությունների զարգացման դասընթացներ և քննարկումներ:

3.8 Կամավորների գործունեությունը նպատակաուղղված է բարձրացնելու երիտասարդների անձնական և մասնագիտական կարողությունները: Այս նպատակով երիտասարդների զարգացման ծրագիրը կհամագործակցի հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների, ֆորմալ և ոչ ֆորմալ երիտասարդական խմբերի և ավագ դպրոցի աշակերտական խորհուրդների հետ:

3.9 **Նշանակման տևողությունը:** Կամավորի ծառայությունը 24 ամիս է, իսկ կարճաժամկետ պայմանագրային Կամավորների ծառայության տևողությունը՝ 3-12 ամիս՝ կախված նշանակումից: Նշանակման հստակ տևողությունը սահմանվում է «Աշխատանքային նկարագրում»:

3.10 **Նշանակումների ժամկետի երկարացումը:** Կամավորների ծառայության ժամկետի երկարացումը կարող է թույլատրվել՝ հիմք ընդունելով այն կազմակերպության կամ համայնքի համաձայնությունը, որտեղ տվյալ Կամավորը ծառայում է, ինչպես նաև Խաղաղության կորպուսի և տվյալ Կամավորի համաձայնության հիման վրա՝ համաձայն Խաղաղության կորպուսի քաղաքականությունների և ընթացակարգերի:

3.11 **Ծառայության վաղաժամկետ դադարեցումը:** Խաղաղության կորպուսում ծառայությունը Կամավորական հիմունքներով է, ուստի Կամավորը կարող է այն դադարեցնել ցանկացած ժամանակ: Եթե Կամավորը անկարող է ավարտել ծառայությունը կամ որոշում է դադարեցնել սույն Հուշագրում ամրագրված ծառայությունը և հրաժարական է տալիս ծառայության ընթացքում, ապա գործում է Խաղաղության կորպուսի համապատասխան քաղաքականությունը:

Նախարարությունն ընդունում է, որ Խաղաղության կորպուսը որևէ կերպ պարտավորված չէ փոխարինելու այն Կամավորին, ում ծառայությունը դադարեցվում է: Ավելին՝ Խաղաղության կորպուսը, իր հայեցողությամբ, կարող է դադարեցնել Կամավորի ծառայությունը՝ համաձայն սեփական քաղաքականության:

3.12 Վերահսկողությունը: Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի ղեկավարը և այն համայնքը կամ կազմակերպությունը, որտեղ ծառայում է Կամավորը, պարտավոր են համատեղ վերահսկել Կամավորին: Կամավորի հետ հետադարձ կապը իր աշխատանքի գնահատականի վերաբերյալ պետք է լինի շարունակական և տեղական համայնքի գործընկերների և Խաղաղության կորպուսի համատեղ ջանքերի արդյունք: Պաշտոնական հետադարձ կապը պետք է իրականացվի ծրագրված այցելությունների ժամանակ, որոնց նպատակն է գնահատել Կամավորի առաջընթացն ու արդյունավետությունը: Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի ղեկավարի առաջնային պատասխանատվությունն է Կամավորների վերահսկումը՝ համաձայն Խաղաղության կորպուսի քաղաքականության, կանոնակարգերի և շահերի: Որևէ Կամավորի նկատմամբ կիրառվող որևէ կարգապահական կամ նմանօրինակ գործողություն պետք է որոշվի բացառապես Խաղաղության կորպուսի կողմից:

IV. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

4.1 Նախարարությունն իր լիազորությունների շրջանակում և ֆինանսական միջոցների առկայության և հնարավորության դեպքում՝

- ա. խորհրդակցություն կտրամադրի Հայաստանի հանրապետությունում Խաղաղության կորպուսի կամավորների և Խաղաղության կորպուսի կողմից իրականացվող դասընթացների, ծրագրերի և կրթական միջոցառումների վերաբերյալ,
- բ. անհրաժեշտության դեպքում կաջակցի Խաղաղության կորպուսին մուտք գործել դպրոցներ և վերապատրաստման կենտրոններ,
- գ. պատեհ առիթներին կճանաչի Խաղաղության կորպուսի Կամավորների ներդրումը Հայաստանի ուսումնական հաստատություններում ԱԼՈՒ և երիտասարդության շրջանում հմտությունների և կարողունակությունների զարգացման գործում:
- դ. Խաղաղության կորպուսի հետ համատեղ կմասնակցի համապատասխան համայնքների և կազմակերպությունների ընտրության գործում: Կամավորների նշանակումն իրականացվում է համայնքի ընտրության ու Կամավորների գործունեության համար Խաղաղության կորպուսի կողմից սահմանված ներքոնշյալ չափանիշներին համապատասխան, ըստ որի
 - համայնքի ղեկավարությունը կցուցաբերի ակտիվ ներգրավվածություն

- համայնքում կան աշխատունակ, հետևողական և վստահելի աջակիցներ, ովքեր կօժանդակեն կամավորին, և
- համայնքում կան կամավորների հետ աշխատել ցանկացող գործընկերների:

Կամավորի գործունեության համար յուրաքանչյուր վայր պետք է համապատասխանի նաև Խաղաղության կորպուսի կողմից սահմանված անվտանգության չափանիշներին:

- ե. Խաղաղության կորպուսի հետ համատեղ կհամակարգի Հուշագրի շրջանակում ԱԼՈՒ և երիտասարդության զարգացման ոլորտներում ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները:
- զ. Հուշագրի շրջանակում յուրաքանչյուր ծրագրի համար կնշանակի ներկայացուցիչ, ով կհանդիսանա Խաղաղության կորպուսի հետ կապ հաստատելու հիմնական անձը, ինչպես նաև Խաղաղության կորպուսին տեղեկատվություն կտրամադրի ԱԼՈՒ և երիտասարդության բնագավառներում իրականացվող Հայաստանի Հանրապետության կառավարության գերակայությունների մասին:
- է. Խաղաղության կորպուսի դիտարկմանը կառաջարկի համայնքներ՝ Կամավորների նշանակման համար:
- ը. Կներկայացնի առաջարկություններ Խաղաղության կորպուսի կողմից ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ:
- թ. Կխրախուսի Կամավորներին կցված հայ գործընկերների մասնակցությունը Խաղաղության կորպուսի պարտադիր դասընթացներին և միջոցառումներին:
- ժ. Խաղաղության կորպուսին, համաձայն վերջինիս դիմումի, ըստ հնարավորության տրամադրել օժանդակություն՝ կապված Հուշագրով նախատեսված ծրագրերի իրականացման հետ:

4.2 Օրենքով սահմանված կարգով՝ իր քաղաքականությունից, ընթացակարգերից, գերակայություններից ելնելով, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայության դեպքում Խաղաղության կորպուսը՝

ա. Անգլերեն լեզվի ուսուցման ծրագրով կապահովի

- կամավորներ՝ սովորողների անգլերենի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով,
- արտադասարանական ծրագրերի միջոցով դպրոցականների քննադատական մտածելակերպի զարգացում՝ նրանց վստահություն հաղորդելու և ոգևորելու նպատակով,
- անգլերեն արտադասարանային միջոցառումների իրականացում,
- անգլերենի կամընտրական ծրագրերի միջոցով՝ սովորողների առաջնորդության և կյանքի հմտությունների զարգացում,
- մարզի ուսուցիչների անգլերենով հաղորդակցվելու հմտությունների զարգացում,

- անգլերենի դասավանդման ընթացքում աշակերտակենտրոն ուսուցման և առարկայական գիտելիքի գնահատման արդիական մեթոդների կիրառում,
- ընթացիկ և ակնկալվող հավելյալ ուսումնական նյութերի և կրթական ռեսուրսների կատարելագործում՝ ուսուցման ընթացքում կիրառելու նպատակով:

բ. Երիտասարդության զարգացման ծրագրով

- կխթանի կամավորության մշակույթի տարածմանը,
- կտրամադրի Կամավորներ՝ երիտասարդների շրջանում հմտությունների և առաջնորդության բարելավելու նպատակով,
- կօգնի երիտասարդներին պատրաստվել աշխատաշուկային՝ բարելավելով վերջիններիս զբաղունակության հմտությունները և աշխատանքի համար հիմնական կարողունակությունները,
- կկազմակերպի արտադպրոցական ակումբային, սպորտային ուսուցողական վարժանքներ՝ երիտասարդների մոտ կյանքի հմտությունների զարգացման նպատակով,
- կտրամադրի կամավորներ՝ բարելավելու երիտասարդական աշխատողների ծրագրային նախագծման և իրականացման կարողությունները,
- կնպաստի երիտասարդների շրջանում անձնական և մասնագիտական աճին, որն էլ կաջակցի վերջիններիս չափահասության փուլ առողջ և ապահով անցումային գործընթացին:

գ. Նախարարության հետ, ԱԼՈՒ և երիտասարդության ոլորտում, ծրագրեր և գործողություններ ուսումնասիրելու, մշակելու և ստեղծելու գործում ներգրավվում, համագործակցություն և համակարգում:

դ. Կապահովի Նախարարության ներգրավվածությունը Խաղաղության կորպուսի կողմից իրականացվող Կամավորների համար կազմակերպված նախապատրաստական դասընթացներին, Կամավորների երդման արարողությանը և այլ միջոցառումներին:

ե. Նախարարություն կներկայացնի Հայաստանում գործող ուսումնական հաստատությունների ցանկը, որտեղ իրականացվում են Հուշագրի շրջանակում իրագործվող ծրագրերն ու Կամավորների գործունեությունը:

զ. Նախարարություն կներկայացնի Հուշագրի շրջանակում իրականացվող ծրագրերի մասին տարեկան հաշվետվությունը:

4.3 Կողմերը համատեղ կապահովեն՝

ա. ԱԼՈՒ և երիտասարդության զարգացման ոլորտներում ֆորմալ և ոչ ֆորմալ բնույթի կրթական գործողությունների և ծրագրերի իրականացումը՝ մարզերում առկա պահանջներին ու առաջնահերթություններին ընդառաջելու նպատակով,

բ. Ոլորտներին առնչվող տեղեկատվության և հրապարակումների պարբերաբար ներկայացումը և տարածումը:

V. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

5.1 Օրենքով սահմանված կարգով, իր քաղաքականությունից, ընթացակարգերից, գերակայություններից ելնելով, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայության դեպքում Խաղաղության կորպուսը կապահովի՝

- ա. կեցության ամսական նպաստ, նախնական նպաստ՝ նոր բնակարան տեղափոխվելու համար, արձակուրդի նպաստ և հարմարվելու նպաստ, ինչպես որ սահմանված է Խաղաղության կորպուսի ակտով և կիրառվող կանոնակարգերով,
- բ. բոլոր բժշկական և առողջական ծախսերն ու ծառայությունները՝ ներառյալ պատվաստումները, շտապ օգնությունը, բժշկական նկատառումներով տարհանումը և, համաձայն ԱՄՆ-ի օրենքի, ծառայության ավարտից հետո նպաստները՝ նախատեսված Խաղաղության կորպուսի ծառայության ժամանակ ստացած վնասվածքների կամ հիվանդությունների համար,
- գ. Խաղաղության կորպուսին վերաբերող ճանապարհորդության բոլոր ծախսերը (օրինակ՝ սկզբնական ժամանման ինքնաթիռի տոմսի արժեքը, վերադարձի ինքնաթիռի տոմսի արժեքը, Խաղաղության կորպուսի կողմից պահանջված ճանապարհորդություն) և անվտանգությանը սպառնացող դեպքերում տարհանում:

VI. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Խաղաղության կորպուսը մտադրված չէ Կամավորին նշանակել աշխատանքի այն տարածքներում, որոնք Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան կամ Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի ղեկավարի կողմից որոշված են որպես անընդունելի, և որտեղ Կամավորներին արգելվում է ճանապարհորդել: Խաղաղության կորպուսում գործում է համապատասխան Կամավորների աջակցության համակարգ, որը նվազեցնում է անվտանգության ռիսկերը, ինչպես ամրագրված է Խաղաղության կորպուսի քաղաքականությամբ: Կամավորներին պետք է ներգրավել Խաղաղության կորպուսի արտակարգ իրավիճակներում գործելու ծրագրում, ինչպես նաև կապ հաստատել նրանց հետ անձնական կամ Խաղաղության կորպուսին առնչվող արտակարգ իրավիճակի դեպքում: Անհրաժեշտության դեպքում Նախարարությունը կարող է ջանք գործադրել օժանդակելու կամ ուղղորդելու այլոց՝ օժանդակելու Խաղաղության կորպուսին՝ համակարգելով Կամավորների՝ բժշկական և արտակարգ իրավիճակի պատճառով տարհանումը, նպաստելով Կամավորի և Խաղաղության կորպուսի միջև հաղորդակցմանը, ինչպես նաև կապ հաստատելով Խաղաղության կորպուսի հետ բժշկական կամ անվտանգության հետ առնչվող արտակարգ իրավիճակում, եթե Կամավորը չի կարող ինքնուրույն կապ հաստատել Խաղաղության կորպուսի հետ: Կամավորների առողջական, բժշկական կամ տարհանման հետ առնչվող բոլոր ծախսերը հոգում է Խաղաղության կորպուսը:

VII. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախարարությունը և Խաղաղության կորպուսը մտադրված են համագործակցել՝ ձևավորելու մեխանիզմներ Հուշագրի շրջանակում մշակվելիք նախագծերի և գործողությունների մշտադիտարկման և գնահատման և հաշվետվության պահանջների հաստատման համար:

VIII. ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հուշագրի յուրաքանչյուր Կողմ առանձին և անկախ սուբյեկտ է: Յուրաքանչյուր կողմ պահպանում է իր ինքնությունը ծառայությունների մատուցման հարցում, և յուրաքանչյուր Կողմ պատասխանատու է իր սեփական քաղաքականության և իր սեփական ծրագրերի ֆինանսավորման համար: Հուշագիրը Խաղաղության կորպուսի և Նախարարության միջև որևէ աշխատանքային, գործընկերային, միջնորդային, համատեղ ձեռնարկության կամ նման այլ իրավական հարաբերություններ չի հաստատում, և ոչ Խաղաղության կորպուսը, ոչ Նախարարությունը իրավասու չեն գործել մեկը մյուսի անունից: Հուշագրի շրջանակներում Կողմերի նախատեսվող պարտականությունները կախված են համապատասխան մարմիններից, կանոններից, քաղաքականությունից, գործընթացներից, առաջնահերթություններից և ֆինանսական միջոցների առկայությունից: Կողմերը համաձայն են, որ համագործակցության բոլոր փուլերում Խաղաղության կորպուսի Կամավորները մնան Խաղաղության կորպուսի Կամավոր: Կողմերի պաշտոնական կնիքների, պատկերանիշերի կամ անունների ցանկացած նախատեսված Կողմերի կողմից օգտագործում հնարավոր է միայն նախնական գրավոր համաձայնության դեպքում:

Հուշագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր և կողմերի համար չի առաջացնում միջազգային հանրային իրավունքով կարգավորվող իրավունքներ և պարտավորություններ:

Հուշագիրն ուժի մեջ է 5 (հինգ) տարի՝ վերջին ստորագրության ամսաթվից սկսած: Հուշագրի Կողմերը կարող են դադարեցնել Հուշագիրը՝ ծանուցելով մյուս Կողմին այդ մտադրության մասին գրավոր 30 (երեսուն) օր առաջ: Կողմերը կարող են փոփոխել, լրացնել սույն Հուշագիրը կամ երկարացնել դրա գործողության ժամկետը: Հուշագրում ցանկացած նման փոփոխություն, գործողության ժամկետի երկարացում կամ լրացում պետք է կատարվի գրավոր և վավերացվի երկու Կողմերի միջև: Հուշագրի երկու լեզուների անհամապատասխանության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տարբերակին:

Ստորագրված է Երևան քաղաքում, ՀՀ, 2023թ. դեկտ. 27-ին, երկու հավասարազոր օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

Նախարար

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՄԻ
ԿՈՂՄԻՑ՝



ՋՈՍԷ ՖԵՅՐԼԻ

ԱՄՆ Խաղաղության կորպուսի
հայաստանյան գրասենյակի տնօրեն

MEMORANDUM OF UNDERSTANDING
BETWEEN THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE
REPUBLIC OF ARMENIA

AND

THE PEACE CORPS

This Memorandum of Understanding (referred to hereinafter as "the MOU") was developed and adopted by the Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia (hereinafter referred to as "the Ministry") and the Peace Corps of the United States (hereinafter referred to as "the Peace Corps"), collectively referred to as "the Participants", on the basis of the Memorandum of Understanding dated 8 August, 2018 and signed in Yerevan.

I. PURPOSE AND SCOPE OF WORK

- 1.1 The people and governments of both countries highlight the importance of having trained specialists in the fields of education and youth development through Peace Corps Teaching English as a Foreign Language and Youth Development programs.
- 1.2 The MOU documents the aims of the Teaching English as a Foreign Language (hereinafter referred to as "TEFL") and Youth Development programs, and the intended roles and responsibilities of both Participants; it seeks to promote understanding between two countries and provides support to the educational systems and youth in Armenia.
- 1.3 The TEFL program envisions to enhance the knowledge of the English language in Armenia through English language clubs and other extracurricular activities conducted at schools. The TEFL program is intended to provide professional support to the English language teachers in Armenia by extending them opportunities to co-teach, be engaged in course planning, teacher training and the development of educational resources.
- 1.4 The Youth Development program aims to strengthen the life skills and employability of young individuals through the implementation of clubs, camps, and after-school sports, leisure, and recreational programs. Additionally, the Youth Development program supports project design and management skills of staff and youth leaders working in non-governmental organizations ("NGOs"), youth centers, and formal and informal youth groups.

II. VOLUNTEER SELECTION AND ORIENTATION

- 2.1 **Recruitment and Selection.** TEFL and Youth Development Volunteers (hereinafter referred to as "Volunteers") are selected by the Peace Corps based on Volunteers' language screening, technical skills, professional references (including suitability for service), necessary documents, and medical evaluations. The recruitment and selection of the Volunteers is done by the Peace Corps.

- 2.2 **Training.** The Peace Corps intends to provide Volunteers with a description of their duties and job responsibilities. The Peace Corps staff should endeavor to provide to a Volunteer a review of their benefits (including allowances, medical care, and leave) and obligations (including professional conduct, compliance with the laws of the Republic of Armenia and U.S. laws, and the policies and procedures of the Peace Corps); administrative, medical, and safety and security training; cross-cultural training, technical training, and Core Expectations regarding their Volunteer performances.

III. VOLUNTEER ASSIGNMENTS

Teaching English as a Foreign Language Program

- 3.1 The Peace Corps intends to place TEFL Volunteers in teacher-training centers, in schools, as well as in vocational institutions and institutions of higher education.
- 3.2 Through the implementation of the TEFL program, the Peace Corps intends to enhance the capacity of English language teachers in Armenia, empower students in their academic success, and empower young people and community representatives to be successful in life.
- 3.3 Through their work with Armenian teachers, Volunteers may develop and present educational materials to enrich libraries and resource centers.
- 3.4 The Volunteer activities are intended to enhance the professional qualifications of community representatives. To do this, the TEFL program should work with schools, colleges of arts and crafts, vocational institutions, and institutions of higher education. The aim of the program is also to cooperate with local organizations through programs targeting community needs.

Youth Development Program

- 3.5 The Peace Corps intends to place Youth Development Volunteers in civil society organizations with a focus on youth programming, as well as youth centers and high schools to work with student councils.
- 3.6 Through the implementation of the Youth Development program, Peace Corps intends to facilitate Armenian youth's effective transition to become empowered, productive, civically engaged adults.
- 3.7 Through their work with Armenian counterparts, it is intended that Volunteers engage in the following activities by using Participatory Analysis for Community Action (PACA) tools and methodology:

Strengthen the life skills of youth

- Co-plan and co-facilitate youth clubs that incorporate life skills development;
- Co-plan and co-facilitate youth camps on life skills development that are linked to youth clubs;
- Mentor youth on life skills; and

- Co-plan and co-facilitate youth recreational activities that incorporate life skills development.

Increase youth's community engagement skills

- Co-plan and co-facilitate youth participation in activities or events related to awareness days (e.g. International Day of Volunteerism, Earth Day, International Youth Day, International Day of Persons with Disabilities, International Women's Day); and
- Co-plan and co-facilitate youth participation in a service-learning project.

Increase youth's employability skills

- Co-plan and co-facilitate youth clubs on employability skills development;
- Co-plan and co-facilitate youth camps on employability skills development;
- Mentor youth on employability skills; and
- Co-teach youth a specific vocational skill set (i.e., ICT for employment, Conversational English).

Increase the skills of youth service providers to effectively implement positive youth development programs

- Co-facilitate youth programs with youth service providers; and
- Teach youth service providers on the implementation of positive youth development program activities.

3.8 The Volunteer activities are intended to enhance the personal and professional competencies of the youth. To do this, the Youth Development program should work with NGOs, Youth Centers, formal and informal youth groups and high school student councils.

3.9 **Length of Assignment.** Volunteer assignments are normally for a period of 24 months. Peace Corps Response Volunteers serve for 3 to 12 months, depending on the assignment. The specific length of an assignment should be set forth in the Position Description.

3.10 **Extension of Assignment.** Extensions of a Volunteer's service may be granted upon approval of the organization or community or site where the Volunteer is placed, the Peace Corps, and the Volunteer, and in accordance with Peace Corps policies and procedures.

3.11 **Early Termination of Assignment.** Service in the Peace Corps is voluntary, and a Volunteer may resign at any time. If a Volunteer is unable or chooses not to complete the assignment established by this MOU and resigns mid-service, standard Peace Corps policies apply. The Ministry understands that the Peace Corps is under no obligation to replace a Volunteer who resigns or is terminated. In addition, at its sole discretion, the Peace Corps may terminate the service of a Volunteer in accordance with its policies and procedures.

3.12 **Supervision.** The Peace Corps Country Director and the local community organization to which the Volunteer is assigned intend to share supervision of the

Volunteer. Performance evaluation feedback to the Volunteer should be continuous and a collaborative effort between the local community partner(s) and Peace Corps. Formal feedback should take place during scheduled site visits designed to measure progress and effectiveness of the Volunteer. The Peace Corps Country Director has primary responsibility for supervision of Volunteers with respect to Peace Corps policies, regulations, and benefits. Any disciplinary or similar action to be taken regarding any Volunteer should be determined solely by the Peace Corps.

IV. CO-OPERATION BETWEEN PEACE CORPS AND THE MINISTRY

4.1 Subject to its statutory authority and the availability of funds, the Ministry intends to:

- a. Provide consultancy on Peace Corps Volunteer-run programs and teaching activities in the regions of the Republic of Armenia in addition to training activities and Peace Corps initiatives, as appropriate;
- b. Support access to schools and training centers, if necessary;
- c. Acknowledge the Peace Corps Volunteers' contributions to English education and youth skills and competency development in Armenia, as appropriate;
- d. Participate in the process of identifying strong local communities and organizations where the Peace Corps may consider Volunteer placement. Volunteer assignment is made based on the Peace Corps' criteria for site identification and placement. These criteria may include, but are not limited to:
 - The active engagement of the leadership in the community;
 - The presence of a viable and consistently reliable support network for the Volunteers;
 - The presence of community counterparts to willingly serve as work partners to Volunteers;
 - Each site considered for Volunteer placement should also meet site safety criteria set by the Peace Corps;
- e. Work with the Peace Corps to coordinate the design, and delivery of the projects in the TEFL and Youth Development sectors;
- f. Appoint a representative to be the main point of contact for each of the Peace Corps Programs under this MOU and keep the Peace Corps updated on the government priorities in the fields of TEFL and Youth;
- g. Suggest potential communities or sites for Volunteer assignment for the Peace Corps to review;
- h. Provide recommendations on the annual report submitted by the Peace Corps;
- i. Encourage the participation of assigned work partners to attend Peace Corps training or events as may be needed; and

- j. Provide the Peace Corps with assistance as requested on the programs developed pursuant to this MOU.
- 4.2. Subject to its statutory authority, policies, procedures, and priorities and availability of funds, the Peace Corps intends to:
- a. Within the TEFL program provide Volunteers to assist on:
- Supporting student English performance in the classroom;
 - Supporting students' development of critical thinking skills and greater confidence, motivation, and leadership through English language-based extracurricular activities;
 - Delivering extracurricular activities in English;
 - Enhancing leadership and life skills through English language non-school based activities;
 - Supporting regional English teachers' communication skills in English;
 - Incorporating new classroom-based assessments and student-centered instructional practices in English classrooms; and
 - Improving the existing and/or developing new supplementary learning materials and resources and integrating them into classrooms and schools.
- b. Within the Youth Development program, provide Volunteers to assist on:
- Promoting volunteerism and service learning among youth in Armenia;
 - Supporting youth development of skills and leadership;
 - Supporting youth development of skills for work;
 - Delivering after school recreational activities;
 - Supporting youth workers to develop positive youth programming; and
 - Promoting and working towards positive personal and professional development for youth and adolescents to support opportunities for future employment, and a healthy and secure transition towards adulthood.
- c. Engage, collaborate, coordinate and work with the Ministry to review, develop, and design projects and activities in the TEFL and Youth Development sectors;
- d. Provide the Ministry with opportunities, as appropriate, to engage with the Peace Corps by attending pre-service training to welcome new trainees, swearing-in ceremonies to support new Volunteers, and other Peace Corps events;
- e. Share with the Ministry the list of the educational institutions, where the Volunteers are implementing the programs under this MOU; and
- f. Submit an annual report on the programs implemented under the MOU.

4.3 Both Participants intend to:

- a. Implement formal and informal educational activities and projects to address the community needs and priorities in the sectors of TEFL and Youth Development in the regions; and
- b. Periodically share information and publications relevant to the field.

V. VOLUNTEER SUPPORT

5.1 Subject to its statutory authority, policies, procedures, priorities, and the availability of funds, the Peace Corps intends to provide:

- a. A monthly living allowance, an initial settling-in allowance, leave allowance, and a readjustment allowance, as provided by the Peace Corps Act and applicable Peace Corps regulations;
- b. All health-related and medical costs and services, including immunizations, primary and emergency care, medical evacuations, and, pursuant to the U.S. law, post-service benefits for injuries or illnesses incurred during Peace Corps service; and
- c. All Peace Corps-related travel (e.g., initial airfare to country, return airfare to home-of-record, travel required by the Peace Corps) and security evacuation travel.

VI. SAFETY, SECURITY, AND HEALTH

The Peace Corps does not intend to assign Volunteers to work in areas determined "off-limits" by the United States Embassy or Peace Corps Country Director and Volunteers should be prohibited from traveling in those areas. The Peace Corps has in place a Volunteer support system to minimize safety risks as prescribed by Peace Corps policy. Volunteers should be included in the Peace Corps' Emergency Action Plan and contacted in the event that there is a personal or Peace Corps emergency. The Ministry should endeavor to assist, or to direct others to assist, the Peace Corps, as necessary, by coordinating Volunteer medical and emergency evacuations, facilitating communication between the Volunteer and the Peace Corps, and contacting the Peace Corps in a medical or security situation in which the Volunteer is unable to contact the Peace Corps. The Peace Corps is responsible for all Volunteer health, medical and evacuation related costs.

VII. REPORTING, MONITORING AND EVALUATION

The Ministry and the Peace Corps intend to work together to develop mechanisms for monitoring and evaluation and establishing reporting requirements for the projects and activities developed under this MOU.

VIII. TERMS, EXTENSION; ADDITIONAL AMENDMENTS

Each Participant to this MOU is a separate and independent entity. As such, each retains its own identity in providing services and each is responsible for establishing its own policies and financing its own activities. This MOU does not create any employment,

partnership, agency, joint venture, or other similar legal relationship between the Peace Corps and the Ministry, and neither Peace Corps nor the Ministry has the authority to bind or act on behalf of the other. The intended responsibilities of the Participants under this MOU should be subject to their respective authorities, regulations, policies, procedures, priorities, and the availability of funds. It is the Participants' intention that the Volunteers at all times remain Volunteers during any period of collaboration between the Participants. Any intended use of the Participants' respective official seals, emblems (logos) or names by the Participants may be allowed only with prior written authorization.

This MOU is not an international agreement and does not create either obligations or rights regulated by international law.

This MOU remains operative for five (5) years from the date of last signature. Participants may discontinue this MOU and should endeavor to give the other Participant thirty (30) days prior written notice. The Participants may change, modify, or supplement this MOU. Any such change, modification, or supplement to this MOU should be made in writing and signed by both Participants. The Participants intend for the English version of this MOU to prevail.

Signed in Yerevan, Republic of Armenia, on the Dec. 27, 2023 in the English and Armenian languages.

**FOR PEACE CORPS,
BY ITS AUTHORIZED
REPRESENTATIVE:**



Joanne Fairley

Country Director,

Peace Corps Armenia

**FOR THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT OF THE
REPUBLIC OF ARMENIA,**

BY ITS AUTHORIZED REPRESENTATIVE:



Zhanna Andreasyan

Minister